ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"16" սեպտեմբերի 2024 թվական N 16-Ն

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 12-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 45-րդ կետի և 10-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2023 թվականի նոյեմբերի 24-ի «2024 թվականի փոստային վճարման պետական նշանների թեմաները սահմանելու և փոստային վճարման պետական նշանների անվանագները, տպաքանակն ու գործողության մեջ դնելու ժամկետները հաստատելու մասին» N 12-Ն հրամանով հաստատված հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2)	Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակ	1 նամականիշով բացիկ	III եռամսյակ	400	1 000
		1 նամականիշ (ոսկե)	IV եռամսյակ	10 000	3 000

»:

2. Հաստատել փոստային վճարման պետական նշանի նմուշը՝ Աշխարհահռչակ հայեր. Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «1924-2018. ՇԱՐԼ ԱԶՆԱՎՈՒՐ. CHARLES AZNAVOUR» 1 նամականիշի (ոսկե), համաձայն հավելվածի:

3. Գործողության մեջ դնել՝ Աշխարհահռչակ հայեր. Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակ թեմային նվիրված «1924-2018. ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ. CHARLES AZNAVOUR» 1 նամականիշը (ոսկե), անվանագինը՝ 10.000 դրամ, տպաքանակը՝ 3 000 հատ:

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված_____
ՀՀ բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2024թվականի սեպտեմբերի 16ի թիվ 16 Ն հրամանի